ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Կազմակերպություն՝ «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ
Հաստիքը՝ Փաստաբան
Աշխատանքի տևողությունը՝ մինչև 2023թ. օգոստոսի 31-ը, երկարացման հնարավորությամբ (մինչև երեք ամիս փորձաշրջանով)
Աշխատանքի հիմնական վայրը՝ ք. Երևան
Աշխատանքի սկիզբը՝ հնարավորինս շուտ
Աշխատաժամանակը՝ Լրիվ դրույք

«Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հասարակական կազմակերպությունն աշխատանքի է հրավիրում վարչական իրավունքի և վարչական արդարադատության ոլորտում մասնագիտացում ունեցող փաստաբանի: Թեկնածուն պետք է ունենա գիտելիքներ մարդու իրավունքների չափանիշների և Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորությունների, մարդու իրավունքների պաշտպանության սկզբունքների և մեխանիզմների վերաբերյալ:

📁 **Փաստաբանի հիմնական պարտականությունները.**

✅Կազմակերպությանը դիմած քաղաքացիներին (շահառուներին) տրամադրել իրավաբանական ծառայություններ, այդ թվում՝ բանավոր և գրավոր իրավախորհրդատվություն, անհրաժեշտության դեպքում իրականացնել ներկայացուցչություն և շահերի պաշտպանություն ՀՀ բոլոր դատական ատյաններում, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում,
✅Պատրաստել անհրաժեշտ իրավական փաստաթղթեր, այդ թվում՝ դիմումներ, բողոքներ, հայցադիմումներ, վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ և այլ փաստաթղթեր, դրանց կազմման համար իրականացնել հետազոտություններ, կազմել տեղեկություն տրամադրելու վերաբերյալ հարցումներ և այլն,
✅Իրականացնել ոլորտային հետազոտություններ, ուսումնասիրել և մշակել կարծիքներ, դիտարկումներ և առաջարկություններ ՀՀ իրավական ակտերի և դրանց նախագծերի վերաբերյալ, ուսումնասիրել ոլորտային միջազգային չափանիշներն ու միջազգային փորձը:
✅Մասնակցել և ներկայացնել Կազմակերպությունը տարբեր հարթակներում ու հանրային միջոցառումներում,
✅Ներկայացնել կատարված աշխատանքների ամենամսյա, եռամսյա և տարեկան հաշվետվություններ Կազմակերպության նախագահին,
✅Կատարել Կազմակերպության նախագահի այլ հանձնարարությունները, որոնք բխում են աշխատանքային պարտականությունների բնույթից և Կազմակերպության գործունեության նպատակներից:

📝**Պահանջվող որակավորումներ և հմտություններ.**

▶️Իրավագիտության ոլորտում բարձրագույն կրթություն,
▶️Մարդու իրավունքների չափանիշների և սկզբունքների իմացություն,
▶️ՀՀ իրավական համակարգի և մարդու իրավունքների պաշտպանության ներպետական մեխանիզմների գերազանց իմացություն,
▶️Փաստաբանական գործունեության նվազագույնը երկու տարվա աշխատանքային ստաժ կամ իրավաբանական գործունեության նվազագույնը երեք տարվա աշխատանքային ստաժ,

ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

- Հայերենի գերազանց իմացություն, անգլերեն և ռուսերեն լեզուների իմացությունը կդիտվի որպես առավելություն,
- Տեղեկություններ հավաքագրելու հմտություններ,
- Հետազոտական և վերլուծական հմտություններ,
- Համակարգչային հմտություններ,
- Պատասխանատվության բարձր զգացողություն և բարեխղճություն,
- Թիմային և անկախ աշխատելու կարողություն,
- Պլանավորման ունակություններ և ժամանակի կառավարում, սեղմ ժամկետներում աշխատելու կարողություն,
- Նախաձեռնողականություն, ազնվություն և բարեխղճություն,
- Խոցելի խմբերի հետ աշխատանքի փորձը կդիտվի որպես առավելություն:

Դիմելու համար պահանջվող փաստաթղթերն են՝

- Ինքնակենսագրություն
- Հետաքրքրության նամակ
- Փաստաբանական գործունեության արտոնագրի պատճենը
- Նախկինում կազմած իրավական փաստաթղթի առնվազն երկու օրինակ (նախապատվելի է՝ հայցադիմումի, առկայության դեպքում՝ վճռաբեկ բողոքի օրինակ)

Հետաքրքրվող և վերոգրյալ պահանջներին համապատասխանող անձանց խնդրում ենք ուղարկել նամակ info@prwb.am հասցեին մինչև 2022 թ. սեպտեմբերի 12-ը՝ էլեկտրոնային նամակի թեմայում նշելով «Փաստաբան» վերնագիրը:

Ընտրության փաստաթղթային փուլն անցած թեկնածուները կհրավիրվեն հարցազրույցի: Պահանջվող փաստաթղթերը չներկայացնելու դեպքում հայտերը չեն դիտարկվելու:

Կազմակերպության մասին

«Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հասարակական կազմակերպությունը հիմնադրվել է 2009 թվականին: Կազմակերպության առաքելությունն է բարձրացնել Հայաստանի Հանրապետությունում մարդու իրավունքների պաշտպանության արդյունավետությունը, իրավունքի գերակայության և լավ կառավարման սկզբունքների ամրապնդումը: Կազմակերպությունը մասնագիտացված է մարդու իրավունքների պաշտպանության, իրավունքի գերակայության, դատաիրավական, կոռուպցիայի դեմ պայքարի, ինչպես նաև անվտանգության ոլորտի բարեփոխումների իրականացման ծրագրերում: